



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

16 մարտի 2015թ. թիվ 80-Ա

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ**  
**ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆ**  
**ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լոռու մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի գործունեությունը կանոնակարգելու, արտակարգ դեպքերի և պատահարների դեպքում բնակչության պաշտպանության գործընթացն առավել արդյունավետ և օպերատիվ կազմակերպելու ու ղեկավարելու նպատակով, հիմք ընդունելով Լոռու մարզպետի 2000 թվականի նոյեմբերի 23-ի «ՀՀ Լոռու մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 181-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2014 թվականի ապրիլի 16-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության օպերատիվ կառավարման վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 289 հրամանը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Լոռու մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնում ստեղծել տեղեկատվական շտեմարան:

2. Լոռու մարզային փրկարարական վարչության պետին՝

1) ՀՀ Լոռու մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի անդամների ներառել ՀՀ ՏԿ և ԱԻՆ Լոռու մարզային ճգնաժամային կառավարման կենտրոնի տեղեկատվական բազաների ձևավորման և համալրման համար անհրաժեշտ տվյալների ցանկը.

2) եռամսյակը մեկ կազմակերպել հանդիպումներ ՀՀ Լոռու մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի անդամների կամ նրանց ներկայացուցիչների հետ.

3) անհրաժեշտության դեպքում՝

ա. տեղեկատվական բազաների համալրման համար ընդգրկել նաև այլ ծառայություններ (կազմակերպություններ).

բ. տալ տեղեկատվական խորհրդատվություն:

3. ՀՀ Լոռու մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի անդամներին՝

1) մինչև սույն թվականի մարտի 25-ը, յուրաքանչյուրն իր մասով, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչություն ներկայացնել ՀՀ ՏԿ և ԱԻՆ Լոռու մարզային ճգնաժամային կառավարման կենտրոնի տեղեկատվական բազաների ձևավորման և համալրման համար անհրաժեշտ տեղեկատվական փաթեթ՝ սահմանված տվյալների ցանկի համաձայն:

2) Ձեր ղեկավարած ստորաբաժանումից (կազմակերպությունից) ընտրել ներկայացուցիչ, որը, անհրաժեշտության դեպքում, կմասնակցի Լոռու մարզային փրկարարական վարչությունում անցկացվող հանդիպումներին, ինչպես նաև տեղեկատվական փաթեթում որևէ տեղեկատվության (տվյալների) փոփոխության դեպքում սեղմ ժամկետում կկատարի համապատասխան ուղղումներ:

3) ներկայացուցիչների վերաբերյալ տվյալները (ազգանուն, անուն, պաշտոն) մինչև սույն թվականի մարտի 20-ը ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2015թ. մարտի 16  
ք.Վանաձոր



Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ